

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտպանի համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտատպանի համար (երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵԼԻ

Նամակ դրամ եռայնը դրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՑ. — Վ.Ա.Ռ.Ա. (Պուլկարիա)

Редакция на вѣст.

„Ирравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Irravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան լոգոյեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Դանուցումն տողը 20 սանթիմ. երե-
փեկ տեղի անգամներու համար 20 օր
գեղջ կը շինի:

ԱՄՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼԻ ՄԵՋ

Եւ

ԵՒՐՈՊԱՅԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այս վերնագրին տակ էօլալ տէ գ'էգօլ տ'օշիւսնի վերջին թիւ դարձեալ գլխաւորեալ կոչ մը կը պարունակէ ինպատ թուրքիոյ սովետներուն:

«Վերջին լուրերը աղիողորմ են, կըսէ Հ. Շարմիսան, թշուառութիւնը հետզհետէ կը սաստկանայ. երեք տարիէ ի վեր իրենց կրած զրկանքներով արդէն ուժաթափ խեղճերը ալ անկարող դարձած են անօթութեան տանջանքներուն տուելու. և որպէս զի գոյատեւութիւնը կատարեալ ըլլայ, այս եղանակին մէջ անօթինակ երաշտութիւն մը կը յապառնայ կեցած հունձքն չորցնել հասունալէ առաջ. սերմնացուի և հիւրի կենդանիներու պակասութեան պատճառաւ այդ հունձքն ալ շատ անշնչան բան է արդէն: Այսպէս թշուառութիւնը ստացած է սուր կերպարանք մը: Վրդովում և անձկութիւն տիրած են ամենէն արի սրտերուն, այնքան ներկան ցաւալի և ապագան անստոյգ է:»

Այս յուսահատական կացութեան պատճառները քննելէ և ցոյց տալէ ետքը, Հ. Շարմիսան իրերու արդի վիճակէն կը հետեւցնէ թէ սովետներուն երկու բան միայն մնացած է ընել, այն է, կամ թշուառութեան և յուսահատութեան մէջ մահուան սպասել, կամ միահամուռ գաղթել, եթէ վերջապէս Եւրոպա չորոշէ գլխաւոր Հայ ցեղին և անոր ձեռք կարկառել, ինչպէս ըրաւ Կրէտացիներուն:

«Երիտասարդութեան արի և հաստատակամ մասէն շատեր յաշողեցան փախչել հակառակ այն հսկողութեան որուն ենթարկուած էին և գնացին արտասահման շատ ցնեղու դժգոհներու և յեղափոխականներու բանակը, որ իր ծայրագոյն գրգռութեան և զայրոյթին մէջ, վերջապէս սուր ի ձեռքին պիտի ստիպուի պաշտպանել

օրինաւոր պահանջները: Եթէ այսպիսի ցաւալի գէպեր տեղի ունենան, անկարելի է այժմէն նախատեսել անոնց ծանր հետեւանքները, միայն մենք կը կարծենք թէ մօտալուտ է, շարժումը: Եւրոպա շատ գէշ կընէ՝ չփութալով քրիստոնէական համերաշխութեան այս ծանրակշիռ հարցը լուծել իրաւունքի և մարդասիրութեան համաձայն եղանակով մը: Բաղադրանքներու հակառակ և աշխարհի խաղաղութեան համար վտանգաւոր է այդ յուսահատները այսպէս մղել ծայրայեղութիւններու:»

Հ. Շարմիսանի կարծիքով Եւրոպայի պարտականութիւնն է ոչ թէ թուրքիոյն բարենորոգումներ պահանջել զորս կը խոստանայ միշտ և սակայն անկարող է գործադրել, այլ ստիպել զայն երթեւեկութեան ազատութիւն տալու իր հպատակներուն, այնպէս որ անոնք կարենան երթալ ուր որ կը յուսան գտնել ապահովութիւն և ապրելու միջոց, երկրին մէջ թէ անկէ դուրս:

«Սպասելով այս պարզապէս մարդասիրական միջոցներուն գործադրութեան, զորս այդնահանգներու գրութիւնը ստիպողական և անհրաժեշտ ըրած է, քրիստոնէական գլխաւորեալ անկէ օգնութեան հասնել այդ տարաբաղդ ժողովուրդներուն որոնք կոտորածէ ազատեցան որպէս զի այսօր սոսկալի սովի մը մատուցին, քիւրտերէն կողոպտուին, և հանրային անապահովութեան, հուձքի պակասութեան հետեւանքները կրեն ու այն կերպով փճանան:»

«Մեր միսիօնարները կը գրեն մեղի թէ այս ահաւոր սովին հետեւանքով մեր Հայաստանի, քիւրտիստանի, Պարսկաստանի և նոյն իսկ Միջագետքի քրիստոնէաները ընկղմած են սոսկալի կարօտութեան մէջ: Հսկողաւոր այրիներ և դեռատի աղջիկներ իրենց ամայացած գիւղերէն դուրս մըղուած սովին պատճառաւ յաջողած են զիրենք սեղմող ոստիկանական շղթայէն անցնելով քաղաքները թափել անվերջ խուժ

բերով — Միայն Մուսուլի մէջ 3-4000 հատ են — և իրենց անօթութիւնը, տանջանքը թեթեւցնելու միջոց մը գտնելու յուսով՝ անոնք ամէն օր մեր միսիօնարներուն դուռը ձեռք կառնեն որոնք սակայն բացարձակապէս անկարող եղած են այդքան թշուառներու օգնելու:

«Մանաւանդ այս տարաբաղդ կիներուն և աղջիկներուն համար է, կը գրեն մեղի, ձեզմէ ստիպողական օգնութիւն կը խնդրեն, որովհետեւ այս խեղճ արարածներէն հարկւրաւորներ անհետացան արդէն թրքական թաղերու մէջ, ուր զիրենք կը քաշեն այն պատառ մը հացը և պատսպարանը զոր միւսկիմանները իրենց կը նուիրեն. ու այն ատեն ալ կորսուած է իրենց հաւատքը և իրենց առաքելութիւնը, որովհետեւ երբ անգամ մը կը մտնեն այդ հարէմներուն մէջ, ալ անկէ դուրս չեն կրնար ելլել առանց կամաւ կամ ակամայ ընդունելու խալաթութիւնը որուն գերի կը մնան այնուհետեւ մինչեւ իրենց կեանքին վերջը:

«Ահա այն թշուառութիւնները զոր մեր ընթերցողներուն գլխաւորեալ կը յանձնարարենք: Մեղի տխրեցնելով պատառ մը հացով օգնելու այն խեղճ արարածներուն, մենք զանոնք պիտի փրկենք յուսահատութենէ, ամօթէ, ուրացութենէ և նոյն իսկ մահէ:

«Ողորմութեան, գլխաւորեալ և առաքելութեան գործ մը պիտի ըլլայ այս որուն հաշիւը պիտի բռնէ Աստուած:»

ՆԵՐԿԱՆ

Անանիոս հանգէսի խմբագրապետ Տ. Արշակ Զօպանեանի յօդուածէն հետեւեալ մասը կարտատպենք:

Լրագրական անիմաստ աճում մը արտասահմանի գաղթականութեանց մէջ վէճի եւ պառակտումի շարժումի կը դառնայ եւ իր մեծամասնութեանը մէջ անխոհմտութեան, խմաստակութեան եւ ինքնախաբուծեան դպրոց մը ժողովուրդին համար: Հայրենիքը ազատե-

լու յաւակնութիւն ունեցող այդ քուրճի կտորներուն մէջէն, կան որ սարսափ կը պատճառեն իրենց ապուշութեան ու միառակարութեան խնդրութեամբ: Միմիայն աղմուկ հանելու եւ դրամ վաստակելու հետամուտ, ասոնք կը հրատարակեն տմեկ տեսակ յիմարութիւններ, առանց քննելու, առանց հետեւանք մտածելու: Վերջերս, ասոնցմէ մին, Աթէնքի «Միութիւնը», ամենայն լրջութեամբ կը հրատարակէր կատակասէրի մը իրեն զրկած մէկ նամակը որով որպէս թէ Տէլքատէ, Ֆօրի յուղարկաւորութեան հանդէսին առիթով տրուած խնջոյքի մը մէջ, ու եւ է հայ պատգամաւորի մը արտասանած մէկ ճառին վրայ: (պատմութիւն մը որ բոլորովին շինծու է), կեղծ կը պատասխանէ թէ հայկական խնդիրը պիտի լուծէ մէկ քանի ամիսէն: Եւ նիւ-Եօքի «Տիգրիս»ը, զոր կուզէի աւելի խոհական տեսնել, իրական լուրի մը պէս կարտատպէ այդ շնորհալութիւնը: Այս օրերս նոյն մը չի կրնար երբեք, խնջոյքի մը մէջ, ու եւ է Հայոց քաղաքական յայտարարութիւն մը ընել, եւ թէ դեռ չեն հասկնար որ, նոյն իսկ եթէ անակնկալ զիպուածով մը հայ հարուստ մը գումար մը նուիրէ ազգային գործին համար, այդ տեսակ իրողութիւն մը հրատարակելու ամենէն զարչելի ոճիւրը պիտի ըլլար ինքնին: Ու Շարմիսան անտանելի «Վարդօն» գիրքի ցերեկ կը մտնայ միջոց մը գտնել որպէսզի Պօլսոյ հայութիւնը ջարդել տայ... Ու Դոշակի խմբագրութիւնը կառկալտիին կը դիմէ, որպէսզի, մէկտեղ վան երթան, թերեւս, սովամահներուն մէջ քանի մը պօմպ նետելու...:

Այն իսկ մը քաղաքախնդիրները որ «գործիչ» կանուանեն զիրենք եւ կը խլրտան այս չարագուշակ լրագրութեան ետին, աւելի քստմեղի են քան զիրենք փառաբանող լրագրիւնները: Այս օրերս Բարիդ հասնող անձ մը կը հաստատէր թէ Պուլկարիոյ բոլոր քաղաքներուն մէջ տանեակներով երիտասարդներ կան որոնք ամսական կառնեն «սուրբ գործ»ին հաշւոյն որոնք յեղափոխութիւնով կապրին... Եւ այդ վարձուած հերոսներն են որ Ֆիլիպէի եկեղեցին գրաւելու կերթան զէնքով, կամ չեն գիտեր որ քաղաքին վարդա-

Եւ ինչ հանդէսը ատրճանակի մըցման կը փոխեն . . . :

Անահիտ

Տ. ԳԵՈՐԳ ԶԻՒՐՄԻՒԶԵԱՆ

Կրօն. Ժողովոյ նախընթաց օրուան նիստին ներկայացուած խնդիրներուն մէջ կրկնամուսնութեան գործ մըն ալ կայ: Խնդրոյն պարագաները, աւելի նորապէսի մը նիւթ կը մատակարարեն քան թէ Ազգային Գրոհիկի մը: Գէորգ քհնյ. Հիւրմիւզեան, մին ալն ե. կեղեցակներէն սր գլուխ դնելու տեղ մը չունին, լեռներ ու ձորեր թափառելէ յետոյ գացել ինկեր է վառնա, ուր վերջին օրերս աւագերեցին ուխտագնացութենէն օգտուելով, ինք իր գլխուն ամուսնայութեան մը կոտորել է և Մշեցի բեռնակիր մը, որուն կինը կենդանի է, պսակել է ուրիշի մը հետ: Խնդրը Թաղ. Խորհրդոյ կողմէ տեղեկագրուած է Պատր. Փոխանորդ Սրբազանը քննութիւն մը կատարելով իր տեղեկագիրը ներկայացուցել է կրօն. Ժողովին: Գէորգ քհնյ. կըսէ թէ «ինչ հրամայեցին և ես պսակեցի»: Իսկ վառնայի Թաղ. Խորհուրդը բացարձակապէս կը մերժէ այս պարագան, և կաւելցնէ միանգամայն որ՝ հակառակ իր կողմէ եղած ազդարարութեանց կատարուած է պսակը, Ժողովը չեղեալ համարել է պսակը և որոշել է քննութիւն մը կատարել քահանային և Թաղ. Խորհրդոյ յայտարարութեանց մասին: Մինչեւ այն ատեն Գէորգ քհնյ. եկեղեցական որ եւ է պաշտօն չը պիտի վարէ:

Սոսրհանդակ

Կրօն. Ժողովոյ սոյն որոշումը Պատրիարքը հաղորդած է տեղ.

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (11)

ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ՉԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

— 0.0.0 —

Բ.

Յովհաննէս աղան առաւօտները ուշկեկ գրասենեակ երթալու սովորութիւն ունէր: Տարիին մէջ օր մըն ալ կար իրեն համար որ բոլորովին տունը կանցնէր. այդ օրը փետրուարի 6ն էր. փետրուարի 6ը Հրանդի ծնունդին թուականն էր. Յովհաննէս աղան այդ օրը իր ազգականներուն խնջոյք մը տալու սովորութիւն ունէր:

Արդ՝ նոյն այն օրը Հրանդի եւ տիկին Վերգինէ առուուն կանուխ արթնցած համադամներու, չաքարեղէններու պատրաստութեամբ զբաղած էին: Շուշան եւ Փառանձեմն ալ այն առաւօտ կանուխ փութացած էին Յովհաննէս աղայի տունը անոնց օգնելու համար. ոգեւորութիւնը աշխատողներու շրջանակին մէջ ընդհանուր էր. աղայիններն ալ մէկտեղ հինգ հոգի գուարթ եռանդով մը կաշխատէին հրաւիրեալները արժանաւորապէս մի.

նոյս Թաղ. Խորհրդոյ, որ պաշտօնապէս իմացուցած է Տ. Գէորգին:

Խմբ.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՎՍՐԱՆԱՅ ՊԱՏԵՐԱՋՄԻՆ ՎՐԱՑ

— 0.0.0 —

(Շարունակութիւն Աստուծոյ քիւն)

Հայկական ապստամբութեան գործին դիւրութիւն կուտար նաեւ երկրին կիսանկախութիւնը. որովհետեւ Հայք թէեւ իրենց իրազաւորէն զրկուելով, պարսիկ Մարզպանի ձեռամբ կը կառավարուէին. սակայն դեռ յինքնանա կը պահէին ինքնօրէնութեան գլխաւոր տարրերը՝ հազարապետութիւնն (ներքին գործոց մատակարար պաշտպանութիւնն) ու սպարապետութիւնը. ասկէ զատ իւրաքանչիւր նախարար ունէր իր մասնաւոր գունդը, և արքունական հարկերը կը գանձուէին հայոց ձեռամբ: Այս բոլոր պայմանները կը դիւրացնէին կազմակերպելու ապստամբական ձեռնարկն ու ազգային դիմումն ի Յոյն, և թէ այս վերջինք փոքր ինչ ձեռնառութեան յոյս ներշնչէին մեզ: Ինչպէս ըսինք, Յազկերտ Բ. (պարսկական բուն յորջորջմամբ Եէզտկերտ) քրիստոնէութեան այս կատաղի հաւածիչը, իր նախորդին դաշանց հակառակ, Յունաց վրայ յարձակեցաւ ի Միջագետք, Յոյք չարաչար պարտութիւնէ մը վերջ, ստիպուեցան փախտական պարսիկ քրիստոնեայները Յազկերտի յանձնել, ինչպէս կը պատմեն մեզ Թէոփորտ, Պերոկոպիոս և մեր տոհմային պատմիչն Եղիշէ, (տես՝ «Եղիշէ» էջ 13 1852 վեհեմիկ) որով խաղա.

ծարելու համար: Հնգեակ խմբակը մէկ կողմէն կաշխատէր, միւս կողմէն աւելի կատակներ կընէր, որոց մէջ միծ բաժին ունէր Հրանդի:

«Աշխատեցէ՛ք մայրիկս, աշխատեցէ՛ք ընկերուհիներս, բարի աղախինս դուն ալ օգնէ՛ մեզի վաղը ձեր օգնութեան փութալէն իմ ամենէն մեծ վարձատրութիւնը պիտի ընդունիք:

— Ի՛նչ պիտի ըլլայ քու մեծ վարձատրութիւնը, հարցուց Փառանձեմ:

— Ինձի եւ քեզի երկու գրեցիկ, պատահաբանց Շուշան:

— Հապա մօրը եւ աղախինի՞ն, հարցուց առաջինը:

— Մօրը համբոյր մը, աղախինին ալ նոր ձեռք մը զգեստ, աւելցուց Շուշան:

— Չը գիտցաք, հաստատեց Հրանդի:

— Հապա ինչո՞վ պիտի վարձատրես զմեզ:

— Չորսերնիդ չորս համբոյրով, իսկ գալով մեր սիրելի աղախինին ինչպէս Շուշան ըսաւ համբոյրին հետ շրջազգեստ մըն ալ պիտի ընդունի:

— Իմ աղբոր զաւակս, ըսաւ տիկին Վերգինէ անհուն խանդաղատանքով մը որով մայր մը կրնայ այդ նախադատութիւնը արտասանել:

Մինչեւ ատեն խոհանոցը աւուր.

ղութիւնը վերահաստատուեցաւ վերահաստատուեցաւ: Թէոփորտ պարտութիւնը հայոց մէջ յուսախաբութիւն յառաջ բերաւ և զայս կականարկէ Եղիշէ ըսելով «Իբրեւ բեկեալ տեսին (հայք) զգորութիւն Յունաց առաջի նորա (իմա՝ Յազկերտ Բ.) յոյժ հարան խոցեցան ի խորհուրդս իւրեանց» (տես՝ Եղիշէ էջ 19 վեհեմ. 1852:

Յիզկերտ Յունաց յաղթելէն վերջ, իր ոյժն ու սուրը դարձուց Բուշաններուն վրայ, և Հայոց զինուորական ոյժ տկարացնելու և ոչնչացնելու չար դիտաւորութեամբ, ուրիշ հպատակ ազգաց պէս, հայոց այրուծին եւս իրեն օգնութեան կանչեց: Այսպէս Յազկերտ Հայաստան իր ոյժէն զրկելէ վերջ պատեհ և յարմար ժամանակ համարեց երկիրն քաղաքականապէս կապել իր տէրութեան հետ, ուղեւոր նաեւ իր կրօնն ընդհանրացնել ինչպէս ալադաւան հպատակաց նոյնպէս և Հայոց մէջ:

Յազկերտ Բ. այս դիտաւորութեամբ յառաջ տարած ջանքերը հայ եկեղեցականութեան մէջ մեծ յուզում յառաջ բերին. այնպէս որ յուզումը երկպառակութիւն ծնաւ, և մինչ ազգին լրջախոհ և շրջահայեաց մասը՝ գրեթէ կէսէն աւելին, խոհեմութեամբ վարուիլ կը սիրէր. մնացեալ մասը խստութիւնն ընտրելով անկերպարան ապստամբութեան գրօնը պարգեց:

Սասանեան քաղաքական հայեացքներու մասին, մեր ցարդ ըրած տեսութիւններէն և խորհնացուցին վկայութիւններէն ակնհայտ եղաւ թէ՛ Յազկերտ Բ.ի հաւածումը Սասանեաններու քաղաքական հայեցողութեանց արդիւնք էր, պատրաստուած և ծրագրուած Հայոց Յունաց հետ ունեցած հաւատակցութենէն: Դժ.

պատշաճի պատրաստութիւններով ըզբաղած էին Յովհաննէս աղան նախասենեակը նստած զանիկը կը ծխէր:

Քիչ մըն ալ դառնաւ Յովհաննէս աղայի դրասենեակը ուր Վահրամ կանուխ կուգար: Ամիսէ մը ի վեր զգալի հոգեկան փոփոխութեան մը ենթարկուած էր այդ երիտասարդը. սիրոյ զգացումը, շատ մը երիտասարդներու պատահածին պէս, զինքն ալ երբեմն երբեմն խոր մտածումներու մէջ կը խորասուզուէր, սկսեւ էր անժամանակ տխրութիւններ ունենալու մասանդ առաւօտները. Հրանդի մասին զգացած համակրանքը պատկառելի համեմատութիւն մը առած էր իր մէջը. մերթ խիզախ համարձակութեան եւ ազնուով աչքերը կը կենդանային, մերթ յուսահատելու աստիճան կը տանջուէր. քանի մը անգամ խորհեցաւ տիկին Վերգինէի բանալ իր սիրտը եւ Հրանդի ձեռքը խնդրել բայց քաջութիւն չունեցաւ այդ միտքին մէջ յարապիւնելու. պահ մը ետքը յարմար տեսաւ իր մօրը բացուիլ, հոտ ալ տեսաւ մը արտնդութիւն զգաց. վերջապէս այս ետքի միջոցը ամենէն բանաւորը նկատելով ատոր վրայ յանգեցաւ. որոշեց այս մասին նոյն գիշեր իսկ յարմար առի.

բաղդաբար Ղազար փարպեցին ուրու պատմութիւնն աւելի պատմական է ու յարգի, և իր պատմութեան մէջ իրենն աւելի պարզ են ու բնական: առանց մեղ տալու վարդանանց վաղահաս շարժման ու ապստամբութեան պատճառները, մեր առջեւ կը դնէ վարդանանց պատերազմը. այսպէսով իր պատմութեան սկիզբը կը մնայ յապաւեալ և կրճատ: Իսկ Եղիշէ, որ իր դիւցազնը՝ Վարդան Մամիկոնեան բարձրացնելու և անոր հակառակորդը՝ վասակ Սիւնի, առ յաւէտ արատաւորելու դիտումով, բնականէն դուրս ելնելով, աւելի իր գործին վիպական գոյն ու դրոշմ տուած է. մեզ կը ներկայացնէ յառաջաւան մը պատկերացնելով ինձա Սասանեանց աւանդական քաղաքականութիւնը, իբր պատճառ այդ շարժման, Սակայն այս առաւելութեամբ հանդերձ Եղիշէի վարդանանց պատմութիւնը բնազատական տեսակետով շատ թերի է և գրուած կողմնակի և կուսակցական ոգւով, հեռի առողջ ողջմտութենէ և անաչառ դատողութենէ:

Արտաշէս Կարապետեան

(Շարունակելի)

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Ի Ն ՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՑ

«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԵՐԻ» ԹԱՏԵՐԱԿԱՆ 6 ԱՐԱՐ

Պիտի ներկայացուի այս իրիկուն (ժամը 9 ին)

Սաեւիկէնիյէ սրահին մէջ:

Մասնաւորաց տոմսակներ զըրկուած են. իսկ որոնք որ դեռ տոմսակ չեն ստացած թող հաճին դիմել Տեարք Տօք. Փափազեանի և Յ. Գուրպէթեանի:

Հսկող Մասնախոռը

Թով մը խօսիլ Հրանդին, անոր ալ վերջնական կարծիքը առնելու: Չը մոռնաք ըսելու որ, չարաթմը առաջ, դատախօսութեան միջոցին, Վահրամ Հրանդիին «գիս կը սիրեմ» հարցումը ուղղելով «այո՞» պատասխանը տուած էր. մինչեւ իսկ կեանքի հետ կապելու աղբոր խօսքեր մը դարձաւ մէջերին: Քիչ խօսելով կատարեալ համաձայնութիւն մը գոյացած էր իրենց միջեւ:

Վահրամ եւ Հրանդի սիրոյ խոստումներով կապուած են. մտքին կար Շուշանը որ զարմանալի կերպով Վահրամի սիրովը տոգորուուն, յարմար առիթի մը կը սպասէր այդ Շուշանի պէս ազգիկը ախով մը Վահրամին իր սիրոյ մատենան բանալու համար. սիրոյ աշխարհին մէջ միշտ այս տարօրինակ անակնկալը տեղի կուենայ. սիրելու նոր սկսող երիտասարդը չը գիտես ի՞նչ տեսակ հրապոյր մը կը զգենու որ միեւնոյն ատենի մէջ իր պաշտած առարկայէն զատ՝ ուրիշներու սիրտն ալ հաւասար կերպով իրեն կը ձգէ, ինչպէս այս բանը պատահեցաւ Վահրամին:

Պէտք է ըսել թէ Շուշան խոհանոցը աշխատած ատեն ներքին խորհրդածութեան մէջ իր ձեռքերը մեքենաբար կը

ԼՐԱՔԱՂ

— 0.0.0 —

— Պատրիարքարանի որոշոց և կարօտելոց խնամակալութեան սեւտուկէն տարեկան 150 ոսկի յատկացուած է կիւրիւնի նորահաս տատ որբանոցին, և տեղային միջոցներով ալ պիտի հայթայթուի ֆինացեալ 50 ոսկին:

— Խորէն խրիմեան և Կորիւն վարդ., որք Ս. Կաթողիկոսի բարտողարներ են, վերստին կ'ամբաստանուին Ռուսահայոց մէջ թէ վերջերս քանի մը հարուստ Ռուսահայ ազգայիններու ամուսնալուծման խնդիրը քաղցնելու համար մեծաքանակ գումարներ ստացիր են:

— Թաթար Բազարճըզէն Տ. Գէորգ վարդ. Նալպանտեան Պուկարիոյ մէջ յարմար պաշտօն մը խնդրած է Պատրիարքարանէն:

— Կեսարիոյ ժրաշնառաւոր Տ. Տրդատ վրդ. Պոլիս հասած է, ուրկէ կուղեւորի Ս. Էջմիածին եպիսկոպոսանալու:

— Պատրիարքարանէ տրուած հրահանգի մը համեմատ Կիւրիւնի Առաջնորդարանը բանակցութեան մտեր է տեղւոյն Ամերիկեան Որբանոցին Տնօրէնութեան հետ, և գոհացուցիչ կարգադրութիւն մը կնքուեր է. ըստ որում հայ որբեր պարտաւոր են շարաթ իրիկուն, կիւրակէ առաւօտ և երեկոյ և տօն օրեր ամբողջովին գալ հայոց եկեղեցին, և ամեն տաղաւարի խոստովանիլ և հաղորդուիլ. հայ որբերը պարտաւորեալ չեն ժողովարան երթալ, բայց ազատ են, եթէ երթալ ուզեն, Հայաստանայ Եկեղեցւոյ դաւանութիւնը պիտի սովորին շարաթը երկու անգամ մասնաւոր դասով:

գործէին, գիտէր որ Վահրամ ան զիւրր անպատճառ Հրանոյշի ծննդեան տարեդարձին առթիւ տրուելիք խնդիրն ներկայ պիտի գտնուէր. միտքը դրաւ ամեն գնով «զքեզ կը սիրեմ» ըսել անոր: Երբ ինք այս խորհելով կը տանջուէր տիկին Վերգինէ ըսաւ.

«Շուշան, Փառանձեմ զաւակներս, ծնունդի օրը տեսոյ որ անհարկ երկշտառութեամբ ներկայացաք Վահրամին. Վահրամը գիտէր որ մեր քաղաքին աւանդէն պարկեշտ, ամենէն ազնիւ մէկ երիտասարդն է. անոր առջեւ քիչ մը աւելի աղատ եւ համարձակ կրնաք վարուիլ. ան ալ մերին մէկ զաւակն է հետեւաբար ինչպէս Հրանոյշի ձեզի համար քոյր մըն է, անկիւյ ալ եղբայր մը կրնայ սեպուելիս»

Այս բացատրութեան վրայ տիկին Վերգինէ եթէ ուշադրութիւն ընէր պիտի տեսնէր որ Շուշան եւ Հրանոյշ թիթեւ մը կարմրեցան Վահրամի առնունը լսելով, սիրտերին սկսաւ թեթեւ մը բարախել. թերեւս երկուքն ալ փոխադարձաբար իրարու յուզումները կուսնեցին. երկու կողմէն ալ կասկածոտ իմաստ մը տալով ներքնապէս զգացուած ալլալովութեան: — Ան ալ մերին զաւակն է — խօսքը միողեցի պէս քաղճք հնչեց Հրանոյշի ականջին,

առաջնորդարան էնկարգուած երկու աշխարհական պաշտօնեաներ պիտի այցելեն օտար որբանոցները և իրենց դիտողութիւնները պիտի հաղորդեն Տնօրէնին:

— Մեծանուն նկարիչ Յովհաննէս Ալվազովսքի իր շինած մէկ պատկերը զրկած է Ռուսիոյ Գաղան Նահանգի մէջ սովեալ ժողովրդեան ինպատու վիճակահանութեան դրուելու համար:

— Վրաց Մցխէթի տաճարի վերանորոգութեան համար Տ. Մանթաշեան 1000 ռպ. և Տ. Արամեան 300 ռուպլի նուիրեր են:

— Վանայ Պատ. փոխանորդ Գեր. Ներսէս եպիսկ. Արարեան դեռ իր պաշտօնատեղին չէ հասած. այս նորընտիր եպիսկոպոսը Տրապիզոնէն սկսեալ մինչեւ Վան քահանայացու խումբերէ պաշարուած կատիպոլի ճանապարհորդութիւնը ընդհատել 6-7 տիրացուները ի մի տրցակ ամփոփելով քահանայ ձեռնադրել. Պայպուրդի մէջ վեց քահանայ ձեռնադրելէ վերջ կարնոյ մէջ ալ քահանայացուներու ամփոփ մը եպիսկոպոսին ճանքուն վրայ լեցուած անոր հասնելուն կըսպասեն. առնուած տեղեկութեանց նայելով ասոնք մեծաւ մասամբ թափթիւած տիրացուներ են եղեր:

— Կարինէն կը գրին թէ Կանգիւղի տղայոց մէջ համաճարակ հիւանդութիւն մը ծագած ըլլալով, 159 չափ մանչ, 15 ալ աղջիկ մեռած են օրական 5-7 հաշուելով. շրջակայ գիւղերն եւս սկսած են նոյն հիւանդութեամբ վարակուիլ:

— Մարութէ Էֆէնտի Ֆրէնկիան Եգիպտոսէն վաւերական աղբիւրէ մը ստացած ծանօթութեան մը համեմատ, «Բիւլանդիոն»-ի կը հաղորդէ թէ՝ 1888ին մեռած

մինչդեռ միեւնոյն բանը խորապէս վերաւորեց Շուշանի սիրտը:

Համադաճնեւ մեծ մասին նախնական պատրաստութիւններն տեսնուած էին, երբեք լմացած էր:

«Օ՛հ զաւակներս! լուացուեցէ՛ք, վեր ելէ՛ք» ըսաւ տիկին Վերգինէ:

Տիկին Վերգինէի այս խօսքին վրայ երեք դեռատի հայուհիները տրուած հրահանգին համակերպելով վեր ելնելու կը պատրաստուէին երբ տան դուռը ուժով մը զարնուեցաւ, այնպէս որ տունը տեղէն ցնցուեցաւ: Յովհաննէս աղայէն սկսելով մինչեւ խոհանոցի աշխատաւորներուն վրայ այս բախումը հաւասարապէս աղէտքի մը տպաւորութիւնը գործեց կարծես: Յովհաննէս աղայի բակին եւ փողոցի դուռին վերայ նայող նախատեսակի դուռին սեւ մին վրայ երեւնալով սրտոտ ձայնով «Դուք բացէ՛ք» ըսելուն վրայ, Հրանոյշ իսկոյն վազեց խոհանոցէն եւ նայրկեանապէս գործադրեց իր հօրը հրամանը. փօլիս մը եւ երկու ոստիկան զէմը ելան. Հրանոյշ չափէ դուռս տոգունեցաւ, տնեցիները անաւոր սորսուռի մատնուեցան, փօլիսը սեմէն մտնելով եւ զէպի Յովհաննէս աղան առաջանալով

«Արդարութեան անունովը կը ձեր-

թագաւոր փաշա կտակ մը ունի եղեր. գործադրութեան համար 15 տարի պայմանաժամ որոշած ըլլալով. սա վերջին տարիներուս պայմանաժամը լրացեր է և գումարը պէտք է 15,000 ոսկիի հասած ըլլայ. նըպատակն ազգային կրթական հաստատութիւն մը հիմնել է եւ եղեր: Թագաւոր փաշա իրեն կը տակարար նշանակեր է հանգուցեալ Նուպար փաշան, անոր որդի Պողոս փաշա և Տիգրան փաշա Ապրօ:

Մարութէ Էֆէնտի այս տեղեկութիւնը հաղորդելով կը հարցնէ թէ կարելի չէ՞ հետաքրքիր ըլլալ այս գործին, և մինչ Նուպար փաշայի կտակ մը չը թողելուն վրայ կը խօսուի ա'յնքան աւելի կարեւոր, սուելի գործնական չէ՞ կոչում ընել անոր վսեմ. որդւոյն, որ գործադրին եղած այս կտակին երեւան բերուելուն և իրագործուելուն հոգ տանի:

Այս մասին պատրիարքին ալ տեղեկութիւններ հաղորդուած է եղեր:

— Ինչպատու վանայ սովելոց վերջին շարժում հետեւեալ գումարները հասած են ի Պատրիարքարան. Սիւստրէէն 20 դաղ. ոսկի, Կիւմիւլճէէն 8 անգլ. ոսկի, Գարգանէն 1620 դահ., Եօկատէն 20, Թօգատէն 10 1/2, Էսկիշէհիէն 5 օսմ. ոսկի, Պուրկազէն 19 դաղ. ոսկի, Էսկիւնէն 30 օսմ. ոսկի և Տրապիզոնէն 561 դահ.:

— Ռուսոգէն հեռուեալը մեղ կը հեռագրեն.

17 մայիս 99

Վարժապետները դասադուր ըրին այսօր անպայման. վարժարանները գոց են. 7-8 ամսականներու համար բողոքեցին Հոգաբարձութեան: Այս է մեր պար-

փակալեմ քեզի, շուտ հետեւէ ինձ» ըսաւ:

Այս խօսքին վրայ Հրանոյշ Նուպարեան, չորս կիներ մէկէն անոր վրայ վազեցին զայն ուշաբերելու համար, տիկին Վերգինէ երկու տաճանիկ հարուածներու տոկալու չափ քաջութիւն ունեցաւ դէթ այն պահուն:

Յովհաննէս աղան ջանքաւորութեամբ եւ արցունքով կուլ աւալով կը քայլէր երկու ոստիկաններու մէջտեղէն. անոր կառավարական պաշտօնեաներու հսկողութեամբ երթալը տեսնողներու վրայ արհաւիրք միայն սիրեց. ամենէն տրգէտէն սկսելով ամենէն խելացին ըմբռնեցին որ անպատճառ վրան քաղաքական անբաստանութիւն մը եղած էր, որովհետեւ ալլապէս Յովհաննէս աղան ոստիկանի կամ փօլիսի հետ գործ չպիտի ունենար. զինքը նկատողները խոր լուութիւն մը պահեցին, նոյն իսկ հարեւան հարեւանի հետ չը համարձակեցաւ խօսելու. այնպէս որ քաղաքի հայ ազգաբնակչութեան մեծ մասը մինչեւ երկուրեւ ժամը թրքական տասը անոր ձերբակալումէն տեղեկութիւն չունէր: Մինաս իր ծանօթներէն միոյն խանութը նստած տեսաւ անոր անցնելը անբարտաւան

տաճանաչ ու ճշմարտասէր Հոգաբարձութեան գործունէութիւնը. անոնք գիտեն միայն ազգին մէջ ատելութիւն ցանել:

Գրիգոր Մովսէսեան

ԹԻԻՐՔԻԼԷՐ ԳՕՆՖԷՐԱՆՍՏԱ

Օսմանլը նամ գոմիթէթ Լա Հէյտէ Թէրքի սիւահ գօնֆէրանսընա իշթիրաք իտէն պիւթիւն տէվլէթլէրին մուրախասլարընա աթիտէթի մաալտա պէյաննամէլէր թագաթիմ իթմիշ տիր:

Լա Հէյտէ ինսանիյէթ նամընա թէճէմմիւ օլընան դօնֆէրանս էսնասընտա Օսմանլը վաթմանթէրլէրլէրին միլլէթ վէ մէզհէպ թէֆրիգ իթմէքսիզին, մէճլիսլէր իտուպ նութգլարլէ մէտէնիյէթի տիւն. եանըն նազարը տըգգաթընը Թիւրքիանըն աճընաճագ հալինէ ճէլպ իթմէկէ թէշէպպիւս իթմէլէրի թապիի տիր: Պիզիմ արզու մըզ գօնֆէրանսըն մագսէտինէ միւթապըզ տըր. պիզ տախի ա. տալէթ վէ հագգանիյէթ իտտաա իտիյօրըզ քի պու սայէտէ սէֆիլ Շարգ էհալիսի դատտար իտարէտէն գուրթուլսընլար: Պիզիմ սէ. տամըզ պիւթիւն Թիւրքիատա է. զիլմէքտէ օլան էհալինին ֆիյոյան ու ֆիզահընատն աքս օլընան նի. տա տըր:

Պիզ մէտէնիյէթի միլլէթլէրին վիճտանընա միւրաճաաթ իտուպ, օնլարտան պիզիմ սէֆալէթիմիզ իշին ատալէթ թալէպ իտէճէկիզ. ատալէթ զուլում տլթընաա պուլընան զարտաշարըմըզ իշին, պա խսուուս պունլարտա էն զի. յատէ մագլում-ասըմըզըն էն պէօ. ինք շէհիտի- Սուլթան Սուրատ իշին քի 22 սէնէլէրտէն պէրու մահպիսնանէսի օլան մէզարտա ու.

յաղթանակի պղտոր նայուածք մը նետելով անոր վրայ:

Ոստիկանները իրենց զօնը առաջնորդեցին բանտ հոն քօմիսէր Ալի էֆէնտի առջեւ հանեցին զինքը. նախապէս վրան թուգարկեցին. բաճկոնի զրպանէն տետրակ մը եւ երկու երեք նամակներ ելան. ժամացոյցը եւ դրամարկի երկրորդ բանալին քովը ձգեցին. Ալի էֆէնտի հրամայեց որ ձերբակալեալը թիւ 1 բանտի սենեակը առաջնորդեն. տունէն դուրս եկած ատեն ոստիկաններու մէջէն քալելը կարգ մը ուրիշ ցաւերու հետ ծանր եկեր էր Յովհաննէս աղային. հիմա բանտին դուռն էր բացուողը. Ալի էֆէնտի տուած հրամանին համակերպելէ առաջ ետին դառնալով, փորձեց հարցում մը ուղղել քօմիսէրին, երբ այս վերջինը անոր նպատակը հասկնալով, իրեն յատուկ սենեակի դուռը բացաւ եւ աներեւոյթ եղաւ. իսկ երբ բանտ մտաւ Յովհաննէս աղա կարծեց որ բանտին պատերը վրան պիտի փլէին:

Դ. Կամուարալկան

Շարունակելի

